ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ/ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի երկրորդ կարգի մասնագետ /ծածկագիր՝ 64-4.3-5/

Բաժնի վարիչի հանձնարարությամբ կատարում է ուսումնասիրություններ տնային այցելությունների միջոցով, մասնակցում է մարդասիրական օգնությունների բաշխման աշխատանքներին, գործազուրկների հաշվառման գործընթացին, քաղաքացիների սոցիալական ապահովության խնդիրների լուծմանը, անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում տվյալների հավաքագրմանը, Մարզի հաշմանդամների ու տարեցների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, Մարզում հաշմանդամության իրավիճակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների մշակման աշխատանքներին, Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- **առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի**
- **նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝**
- **սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ,,բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.**
- **անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում**
- **համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:**
- **տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.**
- **անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրի գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում /Ցանկեր N 1,2/:**

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- **գրավոր դիմում՝ /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.**
- **կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի /թաստաթղթերի/ պատճեն /պատճեները/**
- **աշխատանքային գրքույկի պատճենը՝/ ունենալու դեպքում/**
- **քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը.**

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար 3.4 չափսի.
- անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 13^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է <<18>> փետրվարի 2015թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ /ք.Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7, հեռ. 0264-2-43-76/: